ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ճորտերի ազատութեան 50-ամեակի առիթով կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսի կարգադրութեամբ Մայր Տաճարում կատարուեց փետրվարի 18-ին երեկոյեան ժամերգութիւնից յետոյ հանգստեան պաշտօն ի Տէր հանգուցեալ ազատարար Կայսր Ալէքսանդր Բ. Նիկոլայեվիչի համար, իսկ 19-ին հանդիսաւոր Ս. պատարագից յետոյ, որ մատոյց Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը, կատարուեց կայսերական մաղթանք այժմ թագաւորող Նիկոլայ Բ. Կայսեր բարեբաստ թագաւորութեան և կայսերական ընտանիքի բարօրութեան համար։ Ս. պատարագին և մաղթանքին միաբանութեան հետ ներկայ էին ճեմարանի աշակերտները ուսուցչական խմբի հետ և բազմաթիւ ժողովուրդ։

Գիբրալթարի անգլիական եպիսկոպոսը, որ անցեալ տարի այցելել էր Մայր Աթոռս հանգուցեալ Տ. Մատթէոս Բ. Կաթուղիկոսի անունով Մայր Տաճարին նուէր է ուղարկել սկհոյ մի քօղ, որ կաթուղիկոսական Տեղակալ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը՝ ստանալով յանձնեց Մայր Տաճարի լուսարարապետին պատուիրելով մուտք գրել տաճարի եկեղեցական զարդերի և սպասների տումարում և գործադրել հարկաւոր ժամանակին։

Սկհոյ քօղը կապտագոյն ընտիր ծաղկաւոր ատլաս է մի քառակուսի մետր ծաւալով, նուրբ ասեղնագործ և գոյնզգոյն մետաքսեայ ոսկեթել բանուածքով։

Քօղի կենտրոնում շրջանակի մէջ բանուած է Գառն Աստուծոյ պարզած խաչագրօշը, շրջանակից դուրս արձակելով խաչաձև ոսկեթել ճաճանչներ։ Քօղի չորս անկիւնում մետաքսեայ գոյնզգոյն թելերով բանուած են թևատարած և կանգուն չորս հրեշտակներ, որոնցից երկուսը բուրվառով խնկարկում են, իսկ երկուսը երկիւղածութեամբ ձեռնամած աղօթում։ Քօղի շրջանակը ձևացնում